Հաշվետվությունը գրանցվեց։ Հանձնարարվում է գրանցել (մեկնաբանել հաշվետվությունը)
16.08.2024թ

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի
ծրագրերի իրականացման վարչության
հետազոտական ծրագրերի բաժնի պետ
Անուշ Հովհաննիսյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. ապրիլի 18-ից 2024թ. օգոստոսի 16-ը ժամանակաշրջանում կատարած աշխատանքի

Հաշվետու ժամանակաշրջանում կատարել եմ հետևյալ աշխատանքները:

Մասնակցել եմ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամին ամրացված անշարժ գույքից ռադիոքիմիական ռեֆերենսային լաբորատորիայի կառուցման համար ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեին տարածքի տրամադրման մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակմանը, նախապատրաստել եմ համապատասխան գրությունները: (ՀՀ կառավարության 25. 07. 2024թ. «Անշարժ գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» N1135-Ա որոշում):

Նախապատրաստել եմ գրություններ ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 27-ի թիվ 1250-Ա որոշման կատարումն ապահովելու նպատակով Երևան քաղաքի Հ. Արղության 2-րդ նրբանցք, շենք 10 տարածքից Հ. Արղության 2-րդ նրբանցք, շենք 10/2 շարժական գույք տեղափոխելու նպատակով «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը գումար տրամադրելու խնդիրը կարգավորելու համար Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի միջև կնքված 2024 թ. հունվարի 11-ի N 1/24-Ի պայմանագրում համապատասխան փոփոխություն կատարելու մասին Համաձայնագիր կնքելու և ՀՀ կառավարությանը տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ:

ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելու նպատակով նախապատրաստել եմ «ՀՀ ԳԱԱ «Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ»

պետական ոչ առևտրային կազմակերպությունից գույք հետ վերցնելու և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը գույք ամրացնելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից գույք հետ վերցնելու, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին ու «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամին գույք ամրացնելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերի փաթեթները, համապատասխան գրությունը, ինչպես նաև Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի 19.03.2024թ. նիստի N ԿԱ/91-2024 արձանագրության 10-րդ և 11-րդ կետերով տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ տեղեկանքը: (Համապատասխանաբար՝ ՀՀ կառավարության 18. 07. 2024թ. N1101-Ա որոշում և ՀՀ կառավարության 18. 07. 2024թ. N1129-Ա որոշում):

Մասնակցել եմ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչության հետազոտական ծրագրերի բաժնի կողմից համակարգվող «Գիտական ստորաբաժանումների ամրապնդման ծրագիր - 2024», «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2025», «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր-2024» և Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինելու նպատակով գիտական սարքերի/սարքավորումների գնման հայտերի ընտրության մրցույթների հրավերների փաթեթների մշակմանը, խորհրդատվության տրամադրմանը: Կատարել եմ նաև գրավոր և բանավոր հանձնարարականներ, նախապատրաստել եմ դիմումների պատասխաններ, գրություններ, մասնակցել եմ քննարկումների:

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի
Ծրագրերի իրականացման վարչության
հետազոտական ծրագրերի բաժնի փորձագետ Ռուզան Ասատրյան
16. 08. 2024թ.